

նրպէս իր հիմնական քեզերը ապացուցանող օժանդակ աղբիւրի վրա: Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում պատմաբանի այն քեզը, քե հորեմացին իր պատմութիւնը գրի առնելով Բուդայի արշաւանքից յետոյ (852 - 855),

հանդիսացել է Բագրատունիների շրջանի տիրապետող դասակարգերի քաղաքական համակրութիւնների՝ Բագրատունիների յունասիրական օրիէնտացիայի արտայայտիչն իր պատմութեան մէջ: («Գր. Թերթ», 7 նոյ.):

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սայեաթ Նովա.— Պետերատը տպագրութեան է յանձնել Սայեաթ Նովայի ամբողջական երկերը: Լինելու է երկու տեսակ հրատարակութիւն. 20,000 օրինակ տպւելու է հասարակ քղքի վրա, աժան գնով. 5,000 օրինակ՝ ընտիր քղքով եւ շքեղ:

Տպագրութեան յանձնած է նաեւ Սայեաթ Նովայից 7 երգեր երաժշտագետ Բարխուդարանի ձայնագրութեամբ եւ Շարբաբէանի նկարներով:

Նար - Դոս.— Պետերատի Մոսկւայի տպարանից լոյս է տեսել Նար - Դոսի երկերի 4-րդ հատորը, որ բովանդակում է «Մահը» վէպը:

Մխաբ Մեծաբեկ.— Պետերատը շքեղ հրատարակութեամբ լոյս է ընծայել Մխաբ Մեծաբեկի երկերի լիակատար ժողովածուն խմբագրութեամբ Ալագանի եւ վաղ. Նորեկի: Հատորը ունի յոռաշարան, ծանօթութիւններ ու մեկնաբանութիւններ, մատենագրութիւն եւ բառարան: Արտաքին ձեւաւորումը տրւել է նկարիչ Տ. Խաչվանքեանը:

Ա. Կարինեան.— Պետերատը լոյս է ընծայել Ա. Կարինեանի «Երկերի ժողովածու»-ի ա. հատորը - 1915-28 թ. հրապարակախօսական յօդածները: Որպէս յաւելած, կցւած են մի շարք վաւերագրեր «Պաշտակցական Հայաստանի շրջանից»:

Մ. Զանա.— Ռուսպետերատը առանձին գրքով լոյս է ընծայել դերասան Մ. Զանանի «Շահնամէ»-ն, որոսերէն լեզուով, քարգմանութեամբ Ս. Քոչարեանի: Զանանի քատերախաղը ստացել

էր համաժողովական երրորդ մրցանակը:

Հանրագիտարան.— Մի տարի առաջ յայտարարւած էր, որ 1933 թ. վերջը լոյս պիտի տեսնէր Հայկական հորիզոնային Հանրագիտարանի առաջին հատորը, սակայն այդ խոստումը չկատարւեց: Այժմ «հորիզոն. Արեւստ»-ի վերջին (№ 8-9) համարից տեղեկանում ենք, որ այդ «Հանրագիտարանի բոլոր 15 հատորների բառաշարքը (70,000 բառ) լրիւ պատրաստ է: Հանրագիտարանի իւրաքանչիւր հատորն ունենալու է 70 տպագրական մամուլ, լինելու է պատկերազարդ եւ ունենալու է գումար ու սեւ բազմաթիւ քարտեզներ: Նախատեսւած է այս տարի լոյս ընծայել հանրագիտարանի առաջին հատորը, որն արդէն տպագրութեան է յանձնած, իսկ 1935 թ. ընթացքում՝ 2, 3 եւ 4րդ հատորները: «Ա» տառով սկսող յօդածների նկարներն ու քարտեզները (105 հատ) արդէն պատրաստ են:

Շահնամէ.— Հոկտեմբեր ամսին լրացաւ պարսիկ աշխարհառաջակ բանաստեղծ Ֆերդուսիի ծննդեան հազարամեակը: Այդ առթիւ գրեթէ բոլոր երկրներում տեղի ունեցան յորելանակալ հանդէսներ եւ լոյս տեսան գրական գործեր: Հայ հասարակութիւնն ու գրականութիւնն էլ անմասն չմնացին. հայերը պաշտօնապէս մասնակցեցին Թեհրանում կազմակերպւած համապետական հանդէսներին: Յորելեանը յարգւեց եւ մի շարք գրական գործերով: Այսպէս. Երեսանի «Գրական Թերթ»-ը եւ Թեհրանի «Ալիք»-ը Ֆերդուսիին ներբեմ

յատուկ համարներ: Թեհրանում առան-
ձին գրքով լոյս տեսան «Շահնամէ»-ից
հատընտիր հատածներ Յուլս. Միքզա-
յեանի քարգմանութեամբ. Թեհրանի
Հայկական Դպրոցի տեսուչ Ռ. Աբրա-
համեանը հայ ու պարսիկ մամուլում
երեւան եկաւ առանձին ուսումնասիրու-
թիւններով Ֆերդուսիի կեանքի եւ գոր-
ծի մասին: Երեւանում լոյս տեսաւ Նիւ-
քական-Կուլտուրայի ինստիտուտի հե-
տադասութիւնների ժողովածուն Ֆեր-
դուսիի եւ նրա դարաշրջանի մասին՝
աշխատակցութեամբ Կ. Մ. Օհանջանեանի,
Մ. Աբեղեանի, Գ. Լեւոնեանի և այլոց:
Հայպետհրատը հրատարակեց «Շահնա-
մէ»-ից «Ռոստոմ եւ Սոհրապ» հատ-
ւածը Գ. Ասատուրի քարգմանութեամբ,
որ, ինչպէս գրում են Երեւանի քեր-
քերը, շատ կարճ ժամանակում սպառ-
ւեց: Ֆերդուսիին յօդւածներ ներկեցին
հայերէն գրեթէ բոլոր պարբերականնե-
րն ու քերքերը:

Հայպետհրատը վերջին 2-3 ամիսների
ընթացքում հրատարակել է, ի միջի
այլոց. — Ֆ. Ս. Դոստոյեւսկի, «Երկերի
ժողովածու», ա. հատոր, Սուրխաքեա-
նի յառաջաբանով: Հատորի մէջ մտնում
են «Խեղճ Մարդիկ» «Սպիտակ Գիշեր-
ներ», «Գէշ Անկղզոտ» եւ «Խաղամուրը»:
Թարգմանութիւնը կատարել են Ալ. Շիր-
վանզադէն, Նար-Դոսը եւ Պ. Մակին-
ցեանը:

Մ. Գորկի, «Ծառայութեան մէջ»,
բրգմ. Արագի:

Նար-Դոս, «Երկերի ժողովածու», հա-
տոր Բ. Գ.: Բ. հատորում տպւած են
«Պայքար» վէպը եւ «Սպանւած Աղաւ-
նին»: Գ. հատորում՝ «Զագունեան» վէ-
պը: Երկրորդ հատորին կցւած է Գ. Վա-

նանդեցու ուսումնասիրութիւնը Նար-
Դոսի մասին: «Գր. քերք»-ը (№ 14) նը-
կատում է, որ Նար-Դոսի այս երկու
հատորը կազմւած է մի քիչ անփոքր:
Գ. հատորը ստացել է բաւական նի-
հար»:

Սվիճա, «Գուլիվերի մանապահոր-
դութիւնը», բրգմ. Կարէն Միքայէլեան,
Ակսէլ Բակունցի յառաջաբանով, Ժ. Գը-
րանկելի 400ից աւելի նկարներով: «Գր-
քերք» (№ 15) ասում է, քէ «հայերէն
այս հրատարակութիւնը կարող է մրցել
նոյն գրքի Ակադեմիա-ի հրատարակու-
թեան հետ»:

Յ. Պարոնեան՝ «Երկերի լիակատար
ժողովածու», 4-րդ հատոր, որի մէջ
մտնում են՝ «Կամիքներ», «Հոսիսի
Ջեռատետրը», «Պոտյոտ մը Պոտյոյ Բա-
ղերուն մէջ»: Հատորին կցւած են Ս.
Մանուկեանի ծանօթութիւնները եւ դըժ-
ւար հասկանալի բառերի բառարան:

Ն. Գոգոլ՝ «Տարաւ Բուլրա», քարգ.
Ակսէլ Բակունց, յառաջաբանով եւ օ-
տար բառերի բառարանով:

Ակսէլ Բակունց՝ «Սեւ Յելերի Սերմա-
ցանը», պատմւածքների ժողովածու, որ
ամփոփում է սպւած եւ անտիպ պատ-
մւածքներ: Շքեղ հրատարակութիւն,
Յակ. Կոչոյեանի նկարներով:

Մաքսիմ Գորկի՝ «Ծառայութեան մէջ»,
քարգ. Արագի:

Անտոն Զեխով՝ «Ընտիր պատմւածք-
ներ», որ պարունակում է հեղինակի 10
լաւագոյն պատմւածքները Մկ. Արմէնի
քարգմանութեամբ:

Մ. Սալտիկով-Շչեդրին՝ «Մի քաղաքի
պատմութիւնը», քարգ. Արշ. Տէր-Յով-
նանեան, Միք. Արուշեանի նկարներով:

